




ՀԱԿԱԲԻՈՏԻԿՆԵՐՆ ԱՆԱՍՆԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ՄԵՋ



ՄԻԿՐՈՐԳԱՆԻԶՄՆԵՐ

Միկրոօրգանիզմներն ամենուր են: Դրանց թվում են բակտերիաները, որոնք երբեմն կարող են վարակիչ հիվանդություններ հարուցել մարդկանց, թռչունների, կենդանիների, մեղուների և բույսերի մոտ:



ԿԱՐՈՂ ԵՆ ԱՐՅՈՋ ՄԻԿՐՈՐԳԱՆԻԶՄՆԵՐԸ ԱՆՏԱՅԱՐԵԼ ՄԵԿԻՑ ԱՎԵԼԻ ՏԵՍԱԿՆԵՐԻ:




որոշ միկրոօրգանիզմներ կարող են ախտահարել մեկից ավելի տեսակների, իսկ շատերը կարող են ախտահարել կենդանիներին, թռչուններին և մարդկանց: Առողջ կենդանիների և թռչունների մոտ հայտնաբերված որոշ միկրոօրգանիզմներ կարող են մարդու մոտ հիվանդություն առաջացնել: Միկրոօրգանիզմները կարող են տարածվել բազմաթիվ եղանակներով, այդ թվում՝ սննդի և շրջակա միջավայրի միջոցով:



ՀԱԿԱՄԱՆՐԵԱՅԻՆ ԴԵՂՈՐԱՅՔ

Հակամանրեային դեղամիջոցները, որոնք ոչնչացնում են բակտերիաները, կոչվում են հակաբիոտիկներ: Այս դեղամիջոցներն օգնում են բուժել մարդկանց, գյուղատնտեսական կենդանիների, թռչունների, ձկների, մեղուների, բույսերի և տնային կենդանիների՝ բակտերիաներով հարուցված հիվանդությունները:



ՀԱԿԱԲԻՈՏԻԿՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ

Հակաբիոտիկների նկատմամբ կայուն բակտերիան կարող է գոյատևել նույնիսկ այն հակաբիոտիկի կիրառման պարագայում, որը նախկինում ունակ էր կանգնեցնել բակտերիաների աճը: Խնդիրը վատթարանում է հակաբիոտիկների գերօգտագործման և սխալ օգտագործման հետևանքով:



ՀԱԿԱԲԻՈՏԻԿՆԵՐԻ ՄԱՅՈՐԴՆԵՐ

Երբ կենդանուն տալիս են հակաբիոտիկներ, ապա անհրաժեշտ է որոշակի ժամանակ՝ դրանց ամբողջական կազմալուծման և կենդանու օրգանիզմից **դուրսբերման համար**: Հակաբիոտիկների հետքերը, որոնք հայտնաբերվում են մսի, կաթի, ձկան, մեղրի կամ ձվի մեջ, անվանում են հակաբիոտիկների մնացորդներ:

ՀԱԿԱԲԻՈՏԻԿՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՅՈՒՆ ԲԱԿՏԵՐԻԱՆ ԿԱՐՈՂ Է...


Տարածվել մսի, կաթի, ձկան, ձվի և շրջակա միջավայրի միջոցով:

Դադարեցնել մարդկանց, թռչունների և կենդանիների մոտ ինֆեկցիաների բուժմանն ուղղված հակաբիոտիկների ազդեցությունը:

ՀԱԿԱԲԻՈՏԻԿԻ ՄԱՅՈՐԴՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՆ...

Առաջացնել առողջական խնդիրներ վարակված սնունդ օգտագործած մարդկանց մոտ:


Լինել պարենային ապրանքների այլ երկրներ արտահանման մեթոման պատճառ:



ՀԱԿԱԲԻՈՏԻԿՆԵՐՆ ԱՆԱՍՆԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ՄԵՋ

ԻՆՉ ԱՆԵԼ

մարդկանց ու կենդանիների առողջությունը և
հակաբիոտիկների ազդեցությունը պահպանելու համար



ՆՎԱԶԵՑՆԵԼ ՀԱԿԱԲԻՈՏԻԿՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ

- բարելավել կենսաանվտանգությունը՝ ձեր ֆերմայի կենդանիներին հիվանդությունից զերծ պահելու համար
- կիրառել առաջատար գյուղատնտեսական փորձ՝ հիվանդացության մակարդակը նվազեցնելու համար
- հնարավորության դեպքում օգտագործել պատվաստանյութեր, ուշադրությամբ զննել կենդանիներին՝ հիվանդությունը վաղ փուլում հայտնաբերելու համար
- չօգտագործել հակաբիոտիկ՝ աճի խթանման կամ հիվանդության կանխարգելման համար, մինչև հիվանդության ի հայտ գալը
- օգտագործել հակաբիոտիկներ միայն խիստ անհրաժեշտության դեպքում

ՕԳՏԱԳՈՐԾԵԼ ՀԱԿԱԲԻՈՏԻԿՆԵՐԸ ԽԵԼԱՄԻՏ ՁԵՎՈՎ

- հիվանդության բուժման հարցերով խորհրդակցել անասնաբույժի հետ
- ներկայացնել բիոնմուշները լաբորատորիա՝ ճիշտ հակաբիոտիկ ընտրելու համար
- հետևել հակաբիոտիկի չափաբաժնի և նշանակման օրերի քանակի ցուցումներին՝ նույնիսկ կենդանու վիճակի բարելավման դեպքում
- հակաբիոտիկների մնացորդներից խուսափելու համար՝ հակաբիոտիկների օգտագործումից հետո անհրաժեշտ է սպասել սահմանված ժամանակ՝ նախքան մեղր, կաթ, ձու կամ միս օգտագործելը
- չօգտագործել ժամկետանց հակաբիոտիկներ, իրականացնել դրանց պատշաճ օգտահանում

